Չերրափունցի ջուրի համաշխարհային ֆորումը, ինչպէս կոչուած էր անիկա, կայացած էր ռոտթեբու համար ջուրի կապուած ներկայ քաղաքականութեանց ուղղուած ղեկավարութեան հսկայ ընկերութիւնները

ԱՐԵՎԻԿԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒ...

Շարունակում 7րդ էջին

տարիէն բնածխական կազմի համեմատութիւնները...

է արուեստական ծառ մը, որ պէտք է իսկական բոյսերու աշխատանքը տանի...

լով բնածուխը եւ չարտանետելով թթուածինը: Այդ համեմատութիւնը կը համապատասխանէ 15 հարյուր տոկոսին:

րածելու մասին: Ան դիտել կու տայ, որ բրածոյ վառելանիւթերու վրայ ընդհանրական ապաւինումը մօտ առնուէն պիտի չնուազի եւ բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող երկիրները չեն կրնար սպասել, մինչեւ որ այլ աղբիւրներ ապահովուին:

ԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԾԱՌԵՐ ԿՐՆԱՆ ՕԳԸ ՉՏԵԼ

Ամերիկեան Քոլումբիայի համալսարանին գիտնականներէն տոքթ. Բլաուս Լաքըրը ստեղծած

Գիտնականը կը նախատեսէ, որ արուեստական մէկ ծառ կրնայ տարեկան 90 հազար թուն բնածխական կազմի ներծծել՝ պահե-

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Դէյրուքի սակարանից մէջ օտար դրամացիներու փակման սակագիները...

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Երկրակաշի մէկ ոսկի, Իրանեան մէկ ոսկի, Օսմանեան մէկ ոսկի...

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Ա. կարգ 4 3/8, Բ. կարգ -

ՆԱԶԻՆԻ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

Ներառողական մրցույթը պիտի տիրէ բարեկամներու միջեւ, լաւ նաշի մը ընթացքին: Այս վերագտնումը ջերմ տրամադրութիւն պիտի ստեղծէ: ԳՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Ինչո՞ւ չէք օգտագործել ձեր տարեդարձին առիթը, նաշարանի մը մէջ լաւ հանդիպում մը սարքելու բարեկամներով եւ ազգակցներով: Մտածեցէք այդ մասին:

Ստորագրելու էք այսօր: Ձեր շրջանակին մէջ պիտի ունենաք տպաւորիչ ազդեցութիւն: Ուրեմն յարմար առիթն է օգտուելու ստեղծած պատեհութեան: ԳՅՈՒԼ (22 Մայիսէն 23 Յունիս) Այսօր ունիք պողպատե ջիղեր, կրնաք լուծել այն բոլոր հարցերը, որոնք յոգնեցուցին ձեզ ու ձեր բարոյական կորովը: Ուրեմն՝ գործի անցէք: ԳՅՈՒԼ (24 Յունիսէն 23 Օգոստոս) Այսօր պիտի կարենաք բազմաթիւ հարցեր դասաւորել, որոնք առկա չէին ձեր երկարատեւ ի վեր: Օրը յարմար է նոր որոշումներ տալու: ԳՅՈՒԼ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր մարտունակութիւնը եւ ձեր կայտառութիւնը պիտի օգնեն ձեզ լուծելու խրթին հարցերը: Մի վարձակը ընդառաջելու ձեզի ուղղուած հրաւերներուն: ԳՅՈՒԼ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Պիտի ցուցաբերէք քաջութիւն եւ գորաւոր կամք, որոնք համար կը կարծելիք, քե՛ս անկարող էք: Այսօր շատ հպարտ պիտի զգաք դուք ձեր ձեռքով: ԳՅՈՒԼ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Ուղղամիտ էք եւ հատուցեալ, ուրեմն ձեր առաջարկները պիտի ընդունուին: Պիտի ըլլաք պայծառաստի ու ողջմիտ: Վստահեցէք ձեր ուժին: ԳՅՈՒԼ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Աստղերը պիտի օգնեն ձեզ յաղթահարելու դժուարութիւնները այս ամիս: Եթէ վստահ չէք նաշի մը բաղարուրեան, երբ նաշի հրաւիրուած էք, շուտով մի՛ նաշակէք, որպէսզի չխանգարէք ձեր սննդականը: ԳՅՈՒԼ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Բոլոր աստղերը համաձայնած են ամսուան ընթացքին ձեզ պաշտպանելու: Այսօր պարտականութիւններ պիտի յանձնէք ձեր շուրջիներուն, իսկ դուք ոչինչ պիտի կատարէք: Այսօր հանգիստ պիտի ընէք: ԳՅՈՒԼ (21 Յունուարէն 19 Փետրուար) Կուտագան աստղերը ձեզ պիտի խանգարեն: Այսօր կատարեցէք ձեր գաւակներուն բոլոր փափակները: Օրը յարմար է գնումներ կատարելու: Եթէ օդը լաւ է, գանձեք տարեք պտոյտի: ԳՅՈՒԼ (20 Փետրուարէն 20 Մարտ) Ամսուան ընթացքին լաւ լուրեր պիտի ստանաք: Պիտի չկարենաք հանդարտութիւն ստեղծել ընտանեկան նաշի մը ընթացքին ստեղծուած ծանր վիճակի մը մէջ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՈՒՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱԵՐՉՈՒԹԻՒՆ

ԼԻԲԱՆՆՅԻ ԵՐԿՈՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



էն իրարու քով: Սակայն արուեստագէտը ունի նաեւ նոյն գոյնին տարբեր երանգներով ստեղծագործուած գեղանկարներ: Լիբանանցի արուեստի քննադատներ Մահա ժամասի տասնվեց գեղանկարները նկատեցին իրարմէ անկապ գոյություններ, որոնք թէ՛ թեմայի եւ թէ՛ ոճի տեսակէտէն չունին հասարակ յայտարարներ:



Իսկ միւս կողմէ, ցուցահանդէսին մասնակցած երկրորդ արուեստագէտին՝ Սուհէյլ Զիպանի գործերը նկատեցան աւելի կոռ, թէ՛ եւ՛ նորութեան պուրակ: Տասնհինգ իրաներկ պատարներով ցուցահանդէսին ներկայացած գեղանկարիչը իր գեղանկարները ստեղծագործած է վերացապաշտ ոճով: Անոր գործերը կը թողուն տիեզերքէն «Պատկերներ» տպաւորութիւնը եւ կը նմանին աստղախումբերը, համաստեղությունները եւ երկնային այլ մարմինները: Անոր գեղանկարները կը ներկայացնեն մշուշոտ սեւի, գոց կապոյտի, մանր շագանակի երանգներու խաղեր, որոնք վրայ զօրաւոր կերպով կը հակադրուին աստեղային փայլք ունեցող, բայց դարձեալ մշուշոտ լուսաւոր ձեւերով, դեղինը, կապոյտն ու վարդագոյնը:

Օրինակներ՝ Մահա ժամասի, եւ Սուհէյլ Զիպանի գործերէն

Լիբանանցի գեղանկարիչներու եւ քանդակագործներու կերպարները ներկայացնէ իրաներկ երկու արուեստագէտներու՝ Մահա ժամասի եւ Սուհէյլ Զիպանի գործերուն համալսարանի ցուցահանդէսը, որ կը շարունակուի մինչեւ 8 Մայիս:

Մահա ժամաս, որ ցուցահանդէսին ներկայացած է 16 գեղանկարներով, իր երանգալիսակի համար ընտրած է պանապանի նիւթեր եւ զօրաւոր ու իրենք պիտի չարտադրող գոյներ, որոնք նոյնքան զօրաւոր ու համարձակ հակադրութիւններով կենդանան:

ՕՂԵՐԵՆՈՅԹ
ԵՐԵՎԱՆԻ, 6 ՄԱՅԻՍ 2003
ԳԵՅՐՈՒԹ ԱՐԵՎՈՏ
ՁԵՐՄԱՍՏԻՃԱՆ
ՅԵՐԵՎ՝ 27°C
ԳԻՇԵՐ՝ 18°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 52%

ԱՅՇԻԼ AFHIL
ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
RENT AND SALE
AT HOME
Wheelchair, Walker, Electric Bed, Manual Bed, Water Mattress, Cans, Sticks, Serum Tripod, Walking Frame
HOME MEDICAL EQUIPMENT SERVICES
ՅՈՒՅԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ
ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅՇԻԼ, ԱՅԵՏԻ ԺԵՆԵ, Բ. ՅԱՐԿ
NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԽԱՉԲԱՌԻ ԹԻԻ 5430 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for a calendar or grid.

- 1. Նայտախարիւ (ձի) - Յուլիան անական: 2. Մեղմ ալիք - Ճորոխ գետի վտակներէն: 3. Դերձակին պիտանի իր - Ուրբ: 4. Ժխտական մասնիկ - Հաշուեցանկ - Կրկնուած գիրք: 5. Չուարթ - Արեւոյ: 6. Գունատ - Դաստիարակէ: 7. Կրկնուած ծայրաւորներ - Հայկական տպատառի տեսակ: 8. Անառակ, շղաղշոտ: 9. Իգական անուն - Ակնոցաւոր օձ: 10. Լաւ - Ջանար:

ԹԻԻ 5429

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԹՈՒՄԸ

Table with 10 columns and 10 rows for a calendar or grid.

ԱՅՍՈՐ
- Թատրոն՝ «Լէ Փոքր մոտիք», ժամը 20:30ին, «Մոնո» բառարանային մէջ, մինչեւ 11 Մայիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Միքս», Մուսա ժապուրի գործերը, «Ջիքո շաուս» ցուցասրահին մէջ, մինչեւ 9 Մայիս:
- Գործերու ցուցահանդէս - վաճառք, Հայ Աւետարանական քոլեճի մէջ, մինչեւ 6 Մայիս:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Պէլլուր Այգ», «Յընել» ցուցասրահին մէջ, մինչեւ 16 Մայիս:

ԱՂԱԿ 50 ՏՆԱՐԻ ԱՌԻՄՁ 6 Մայիս 1953

ՀԱՅԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՒԸ ՀԱՐԱԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ (ԱՐԺԱՆԹԻՆ, ՈՒՐՈՒԿՈՒԵՅ, ՊՐԱԶԻԼԱ)


Ընդհանուր բիւն է մօտ յիսուն հազար: Արժանիքի մայրաքաղաքին՝ Պուէնոս Այրեսի մէջ երեսուն հազար: Բացի առաջնորդանիստ Ա. Գրիգոր Լուսարիչ Մայր եկեղեցիէն, կայ Ֆլորենտի վարձարայ Ա. Խաչը եւ շրջաններու մէջ, ներկայիս երեք մատուներ: Լիբանանի Ա. Պողոս Պետրոսը, Փօքր - Ալիսանյի Ա. Շուշանը եւ Վիժա - Սոյտարիի Ա. Սահակ Մեքարայ մատուղը: Հայրապետական պատուիրակէն գատ, կը գործեն փոխանորդ Յարութիւն վրդ. Մուշեան եւ Գուրգէ վրդ. Թաշեան, որ նաեւ տնօրէն է քաղիկ Ազգային վարժարանին: Պուէնոս Այրեսի մէջ կը պաշտօնավարեն երեք քահանաներ, Նորայր Ա. քնյ. Խորենան, Շաւարշ քնյ. Մեհրապեան եւ Տիրայր քնյ. Տիւրքեան: Անոնք, Մայր եկեղեցւոյ եւ արուստաններու մատուներուն մէջ, փոխնիփոխ հոգեւոր պաշտամունք կը կատարեն: Կան 12 դպրոցներ եւ ծաղկոցներ, որոնց մէջ կ'ուսանին 600 աշակերտներ: Քսան ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ հայեցի կրթութիւն կու տան: Այս դպրոցներէն մէկ քանին ունին առատեան եւ երկդեղեղեղ դասընթաց: Տղոց համար պարտաւորիչ է տեղական վարժարան յանձնելը: Կը հրատարակուի «Նայ կեդրոն» ամսագիրը պաշտօնաբեր առաջնորդարանի, խմբագիր Յարութիւն վրդ. եւ Շաւարշ քահանայ: «Արմենիա» երկօրեայ, խմբագիր՝ Վարդան Գեորգեան: «Շարժում», շաբաթաբեր, խմբագիր՝ Ա. Խոյմեքեան,

ԱՅՍՈՐ՝ 6 ՄԱՅԻՍԻՆ
1904 - Բոփի կոլը՝ Սմբատի ղեկավարութեամբ:
1913 - Մահ Տուրքալի (Յարութիւն Կիրակոսեան):
1959 - Մահ ականաւոր դերասան Վաղարշ Վաղարշեանի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ՎԱՂԸ՝ Հ. Մ. Բ. Մ. – ԱՀՏ

Լիբանանի ֆուտբոլի բաժնի մրցաշարի քառորդ աւարտականի երթի մրցումներուն, անցեալ Կիրակի օր Սալամ 10-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Իսլամ Պրոմ Շիմալին, Թրիփոլի մէջ տեղի ունեցած մրցումին: Ա. կիսախաղին 3-0 արդիւնքով յառաջացած Սալամ ապահովեց կիսաարտական հանգրուանին իր տունը, նկատի ունենալով որ դարձի մրցումին Իսլամի դժուար թէ կարենայ 11 կոլ նշանակել անոր բերդին ներս:

Քառորդ աւարտականի երթի մնացեալ երեք ձևատումները տեղի կ'ունենան վաղը՝ Չորեքշաբթի:

Պուրձ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ, վաղը՝ ժամը 4:30ին, Հ. Մ. Բ. Մ. ֆուտբոլի ներկայացուցչական խումբը կը հիւրընկալէ Ահտը:

Դարձին որեւէ դժուարութիւններու դիմաց չգտնուելու համար, Հ. Մ. Բ. Մ. ի մարզիկներէն կը պատուի յաղթանակ մը արձանագրել, վստահաբար իրենց համակիրներուն ներկայութեան, որոնք անկասկած որ պիտի լեցնեն իրենց տրամադրուած թրիպիւնը:

Հ. Մ. Բ. Մ. ի կազմէն պիտի բացակայի բերդապահ Սաֆո Էսքիճեան (կախակալուած): Անոր փոխարէն այդ պաշտօնը պիտի ստանձնէ Ժաք Պչաքճեան: Հ. Մ. Բ. Մ. էն պիտի բացակայի նաեւ Դո Քէիէեան (վիրաւոր):

Նոյն օրը եւ միեւնոյն ժամուն Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ Անսար պիտի ճակատի Օլիմպիքի դէմ, իսկ երեկոյեան ժամը 8:30ին, Մարպական Անանի դաշտին վրայ Նրժմէ՝ Թատամուն Սուրի դէմ:

● ԻՆՏՆԱՆՏԻՆՈՅ մէջ իր կատարած մրցումին, Լիբանանի ֆուտբոլի Ողիմպիականի խումբը, անցեալ Շաբաթ օր անոր դաշտին վրայ 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց 2004ին Աթէնքի մէջ տեղի ունենալիք Ողիմպիականի ֆուտբոլի վտումի մրցաշարի Բ. հանգրուանի երթի մրցումներուն զօով:

Հակառակ իր կրած այս պարտութեան, սակայն, Լիբանան դուրս չէ մնացած, որովհետեւ դարձի մրցումը տեղի պիտի ունենայ Պէյրութի մէջ:

ԼԵՎԱՄ

ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

Անցեալ շաբաթավերջին, Ազգային Լեռն եւ Սոֆիա Յակոբեան քոլեճի դաշտին վրայ փոփոխ ունեցան Հ. Մ. Բ. Մ. ի ԼԵՎԱՄ յաստիքային մրցումները, որոնք փոփոխ հետեւեալ արդիւնքները.

- Մեծ փոսթ – Մետրոպէան – Ե. Մանուկեան 65-35
- Մեծ փոսթ – Կ. Բ. Վ. – Շամիլեան-Թաթիկեան 57-45
- Մեծ փոսթ – Սոֆիա Յակոբեան – Կ. Բ. Վ. 38-35
- Միջակ փոսթ – Ս. Խանամիրեան – Ե. Մանուկեան 38-17
- Մեծ աղջիկներ – Յատայ – Ս. Նոյիսիմեան 39-81
- Միջակ աղջիկներ – Յովակիմեան – Յատայ 25-20
- Միջակ աղջիկներ – Մետրոպէան – Ս. Նոյիսիմեան 29-24
- Միջակ աղջիկներ – Կ. Բ. Վ. – Ս. Խանամիրեան 23-26

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԱՅՍՕՐ՝ ԱՂԶԿԱՆՑ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Լիբանանի փինկ փոնկի աղջկանց խմբային ախոյեանութեան մրցաշարին, որ տեղի կ'ունենայ Մոն Լա Սալի մէջ, այսօր՝ Երեքշաբթի, Հ. Մ. Բ. Մ. Պէյրութ կը կատարէ երկու մրցում: Առաջինին, որ տեղի պիտի ունենայ ժամը 5:30ին, Հ. Մ. Բ. Մ. ի աղջիկները պիտի ճակատեն Սարիամին խումբին դէմ, իսկ երկրորդին (ժամը 7:00ին)՝ Ռիատի Պէյրութի դէմ: Նշենք, թէ ցարդ իր կատարած երեք մրցումներուն ալ Հ. Մ. Բ. Մ. յաղթանակ արձանագրած է:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ԿԻՍԱԻԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ՈՒԹ ԽՈՒՄԲԵՐԸ

Էն. Պի. Էյ. ի փէյնօֆի մրցումներուն քառորդ աւարտականէն ետք յտակացան ութ խումբերը, որոնք ապահովեցին կիսաարտական հանգրուանին իրենց տունները: Արեւելեան շրջանէն իրենց տունները ապահովեցին Պոսթըն Սէլթիքս, Նի Ճըրպի Նէթ, Ֆիլատելֆիա Սթարզ եւ Տիթոնի Փիլթիքս, իսկ Արեւմտեան շրջանէն՝ Լոս Անճելըս Լէյքըրզ, Սան Անթոնիօ Սփըրզ, Տալաս Մալթրիքս եւ Սաքրամենթօ Քիւկզ:

(Արեւմտեան շրջան): Կիսաարտական հանգրուանի մրցումները, որոնք կը սկսին այսօր, քառորդ աւարտականի մրցումներուն նման պիտի ըլլան, այսինքն եօթ մրցումէ չորս յաղթանակ արձանագրող խումբը պիտի ապահովէ իր շրջանին աւարտական հանգրուանին տունը:

Այսօրուան յայտագիրին վրայ են երկու մրցումներ: Առաջինին, Սան Անթոնիօ Սփըրզ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Լոս Անճելըս Լէյքըրզը, իսկ երկրորդին, Նի Ճըրպի Նէթ Պոսթըն Սէլթիքսը: Վաղը Չորեքշաբթի, Տալաս Մալթրիքս կը հիւրընկալէ Սաքրամենթօ Քիւկզը, իսկ Տիթոնի Փիլթիքսը՝ Ֆիլատելֆիա Սթարզը:

ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ



ԺԻՒՏՕ

ՀԱՅԱՍՏԱՆ ԼԱՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԷՐ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Երեւանի «Կարէն Դեմիրճեան»ի անուան մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցան ժիւտոյի 23 տարեկանէն վար եւրոպայի ախոյեանութեան մրցումները:

Հայաստան, որ իր մասնակցութիւնը կը բերէր 13 մարզիկով, շահեցաւ 1 ոսկի, 2 արծաթ եւ 4 պրոնչ մետալներ:

Ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը գրաւեց Ռուսիա, որ շահեցաւ 6 ոսկի մետալ: 2էն 4րդ դիրքերը գրաւեցին՝ Ուքրաինա, Հունգարիա եւ Յունաստան:

Հայաստան իր մէկ ոսկի, մէկ արծաթ եւ 2 պրոնչ մետալները շահեցաւ տղոց մրցումներուն, իսկ մէկ արծաթ եւ 2 պրոնչ մետալները՝ աղջկանց մրցումներուն:

Ոսկի մետալին արժանացաւ Արմէն Նապարեան, արծաթ մետալին՝ Վարուժան Իսրայէլեան եւ Անուշ Յակոբեան, իսկ պրոնչ մետալներուն՝ Ղաչարուս Գրիգորեան, Գէորգ Բարսեղեան, Կարինէ Ղեւոնդեան եւ Սվետլանա Անտոնեան:

Այս մրցաշարը լաւ ձեւով կազմակերպելուն համար, Հայաստանի ժիւտոյի ֆետերասիոնի նախագահ Ալեքսան Աւետիսեան ոսկի մետալով մը պարգեւատրուեցաւ Եւրոպայի ժիւտոյի ֆետերասիոնի նախագահ Մարիուս Կիպրի կողմէ:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆուտբոլի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, Կոտայք Արովեան 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Փիւնիկ Երեւանի հետ, տասը կէտով կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը: Փիւնիկ ութ կէտով կը գրաւէ 3րդ դիրքը:

2րդ դիրքը գրաւող Շիրակ Գիւմրի ունեցաւ 9 կէտ, 2-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Լեռնագործ Կապանը: Տիւնաձ-2000 Երեւան 3-2 արդիւնքով պարտութեան մատնեց Միքա Աշտարակը եւ վերջապէս Բանանց Երեւան 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Արաքս Արարատը:

ՊՈՒՆՏԵՍԼԻԿԱ

ՓՈՒՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐ ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունփըսլիկա) 31րդ հանգրուանի մրցումներուն, վարանգաւոր դիրքի վրայ գլխունող Պայէր Լեւերքուզը կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ 3-1 արդիւնքով դարձուցեց իր մարտիկները:

Պայէրն Միւնիխ, որ անցեալ շաբաթ 18րդ անգամ ըլլալով փոխաբայ Պունփըսլիկայի իրիպոսին, 1-0 արդիւնքով դարձուցեց իր մարտիկները:

Պունփըսլիկայի աւարտին երեք հանգրուան առաջ, այժմ դայաբար սուր է՝ Շթութլարքի եւ Պորուսիա Տորթնուրի միջեւ, փոխ ախոյեան հանդիսանալու համար:

Սպորտի 31րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

- Պայէր Լեւերքուզը – Արմիցիա Պիլֆելտ 3-1
- Հանգա Ռոսթըր – Շալքէ 3-1
- Վերտըր Պրեմըն – Լեյքս Պերլից 4-2
- Պորուսիա Տորթնուր – Վոլֆսպուրկ 2-2
- Նիւրնբերկ – 1860 Միւնիխ 1-2
- Զոթպուս – Համպուրկ 0-0
- Պոխու – Պորուսիա Մեոնընկլատպախ 1-1
- Հանովըր 96 – Շթութլարք 1-2
- Պայէրն Միւնիխ – Զայդլախուսթըրն 1-0

ԳԱՍԿՈՐՈՒՄ

- 1.- Պայէրն Միւնիխ 69 (62-20)
- 2.- Շթութլարք 56 (50-36)
- 3.- Պորուսիա Տորթնուր 53 (46-25)
- 4.- Լեյքս Պերլից 51 (47-35)
- 5.- Համպուրկ 49 (39-34)
- 6.- Շալքէ 46 (44-36)
- 7.- Վերտըր Պրեմըն 46 (47-45)
- 8.- Վոլֆսպուրկ 42 (35-38)
- 9.- 1860 Միւնիխ 42 (39-45)
- 10.- Զայդլախուսթըրն 38 (38-38)
- 11.- Հանգա Ռոսթըր 38 (32-36)
- 12.- Պոխու 38 (47-52)
- 13.- Արմիցիա Պիլֆելտ 36 (34-39)
- 14.- Հանովըր-96 36 (42-55)
- 15.- Պորուսիա Մեոնընկ. 35 (34-42)
- 16.- Պայէր Լեւերքուզը 34 (42-52)
- 17.- Նիւրնբերկ 30 (31-53)
- 18.- Զոթպուս 26 (31-59)

«ՉԵՄՓԻԼՆԶ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝ ՌԵԱԼ – ԵՈՒՎԷ

«Չէմփիրն Լիկ»ի մրցաշարին կիսաարտական հանգրուանի երթի մրցումին, այսօր՝ Երեքշաբթի, Ռեալ Մատրիտ իր դաշտին՝ «Մանթիալո Պեճնալ»-ի մէջ կը հիւրընկալէ Եուվեթուսը:

Նշենք, թէ կիսաարտականի երկրորդ մրցումը տեղի կ'ունենայ վաղը՝ Չորեքշաբթի, երբ Միլանօ քաղաքի երկու խումբերը՝ Ա. Մէ. Միլան եւ Ինթեր Միլան կը ճակատին իրարու դէմ: Երկու մրցումներն ալ տեղի կ'ունենան ժամը 21:45ին՝ Պէյրութի ժամով:

Բացակայ մարզիկներով հարուստ Մարչելօ Լիփիի կազմը՝ Եուվե պիտի փորձէ անպայման լաւ արդիւնք մը արձանագրել Սպանիոյ մայրաքաղաքին մէջ, դարձի մրցումին դժուարութիւններու դիմաց չգտնուելու համար: Անոր կազմէն պիտի բացակային՝ Մարսելօ Սալաս (վիրաւոր), Փաուլօ Մոնթերօ, Էտկար Տաիտօ եւ Ալեկիօ Թաքիարտի (կախակալուած):

Վիչենթէ Տէլ Պոսթի կազմը ունի միայն մէկ բացակայ՝ Ռատու Կոնպալետը:

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՅՔԱՐԸ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՍՐԻ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 32րդ հանգրուանի մրցումներուն, Տեփորթիօ Քորուսի եւ Ռեալ Մատրիտի արձանագրած յաղթանակը տիտղոսին համար պայքարը դարձուց անխնայ պայքարական, նկատի ունենալով որ անոնք այժմ միայն մէկ կէտով ետ կը մնան Ռեալ Մատրիտէն:

Ստորեւ՝ 32րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	
Ալաւես – Սելթա Վիլո	0-0
Վիարեալ – Մալախ	0-0
Ռեալ Պեթիս – Էսփանիոլ	1-1
Ռասիլ Սանթանտեր – Վալենսիա	2-1
Ռեալ Վալադոլիտ – Աթլետիքօ Մատրիտ	3-1
Օսասունա – Աթլետիքօ Պիլաօ	1-5
Պարսելոնա – Ռաջօ Վալենսիա	3-0
Տեփոր. Քորուս – Աթլետիքօ Տուրիս	5-0
Ռեալ Մատրիտ – Մալորքա	1-5
Ռեալ Մատրիտ – Սելիլլա	1-0

ԳԱՍԿՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Ռեալ Մատրիտ	64 (71-38)
2.- Տեփորթիօ Քորուս	63 (57-36)

3.- Ռեալ Մատրիտ	63 (59-40)
4.- Սելթա Վիլո	53 (36-24)
5.- Վալենսիա	53 (47-25)
6.- Մալորքա	44 (42-47)
7.- Աթլետիքօ Պիլաօ	44 (52-52)
8.- Պարսելոնա	43 (52-42)
9.- Մալախ	43 (39-35)
10.- Ռեալ Պեթիս	43 (43-45)
11.- Սելիլլա	42 (29-29)
12.- Աթլետիքօ Մատրիտ	41 (44-43)
13.- Ռասիլ Սանթանտեր	40 (42-49)
14.- Ռեալ Վալադոլիտ	39 (31-34)
15.- Էսփանիոլ	37 (39-43)
16.- Վիարեալ	37 (31-42)
17.- Աթլետիքօ Տուրիս	33 (33-55)
18.- Օսասունա	33 (28-38)
19.- Ալաւես	31 (31-55)
20.- Ռաջօ Վալենսիա	27 (26-55)

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄՈՆԱՔՕ ՆԱՀԱՆՁԵՑ ՅՐԴ ԴԻՐՔ

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 35րդ հանգրուանի մրցումներուն, Մոնպո 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Փարիզ Մէն ժերմինի դաշտին՝ «Փարք Տէ Փրէնս»-ի մէջ, նահանջեց 3րդ դիրքը, իր տեղը փոխելով Լիոնին, որ 4-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սթրասպուրկը, գրաւեց պարագլուխի դիրքը, երեք կէտի առաւելութիւն ունենալով իշխանապետական կազմին վրայ:

Մարսէյ իր կարգին յաղթանակ մը արձանագրեց «Վելտրոն»-ի մէջ, 2-1 արդիւնքով պարտութեան մատնելով Պասթիան:

Ստորեւ՝ 35րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Մարսէյ – Պասթիա	2-1
Պորտօ – Օքսէն	0-1
Կէնկան – Լանս	1-0
Լը Հաւրը – Ամաքիօ	0-1
Լիլ – Ռէն	1-0
Մոնպէլիէ – Նանս	1-0
Նիս – Սթրաս	0-0
Սթրասպուրկ – Լիոն	0-4
Թրուա – Սոչօ	0-2
Փարիզ Մէն ժերմին – Մոնպո	2-1

ԳԱՍԿՈՐՈՒՄ	ԿԷՏ
1.- Լիոն	64 (60-36)
2.- Մարսէյ	62 (37-30)
3.- Մոնպո	61 (56-29)
4.- Պորտօ	57 (52-35)
5.- Սոչօ	57 (39-28)
6.- Օքսէն	57 (34-28)
7.- Նիս	54 (37-26)
8.- Փարիզ Մէն ժերմին	53 (47-33)
9.- Կէնկան	53 (48-4)
10.- Նանս	53 (36-33)
11.- Լանս	48 (37-30)
12.- Պասթիա	45 (36-42)
13.- Սթրասպուրկ	41 (36-50)
14.- Մոնպէլիէ	39 (34-47)
15.- Լիլ	38 (27-42)
16.- Ռէն	36 (30-41)
17.- Սթրաս	35 (36-51)
18.- Լը Հաւրը	35 (24-41)
19.- Ամաքիօ	35 (27-47)
20.- Թրուա	28 (21-41)

ՈՒՍՏԻՆԿԹՆԵՆ ԵՐԿԱՅԱԳՈՒՅ ԻՐԱՔԵԱՆ ՂԵՎԱԿԱՐ ԽՈՐՀՈՐԴ ՄԸ ՅԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ

Միացեալ Նահանգներ ներկայացուցին իրաքեան ղեկավար խորհուրդ մը յառաջացնելու ծրագիր մը: Իրաքի մէջ ամերիկեան քաղաքային իշխանութեան ղեկավար ձեռնարկը ըսաւ, որ Իրաքի քաղաքական այլապէս ճակատները ներկայացնող խորհուրդ մը պիտի յառաջացուի, որպէսզի պատրաստէ փոխանցման հանգրուանի կառավարութիւնը: Կարճըր նախատեսեց, որ խորհուրդը բաղկանայ ինը ղեկավարներէ, որոնք պիտի դառնան առժամային ղեկավարութիւնը: Կարճըր դիտել տուաւ, սակայն, թէ իրեն համար տակաւին յստակ չէ, որ այս խորհուրդը ինչպիսի՞ գործելակերպ պիտի որդեգրէ եւ կամ ի՞նչպէս կարելի պիտի ըլլայ հաւաքական ղեկավարութեամբ մը գործել:

Կարճըր ակնարկեց, որ ղեկավար խորհուրդին անդամակցութեան թեկնածու կը նկատուին քիրտ երկու ղեկավարներ Մասուտ Պարպանի, Ժալալ Թալապանի, ինչպէս նաեւ Իրաքի Ազգային Ժողովի նախագահ Ահմէտ Ժալապի, որ Ուաշինկթընի նախասիրած անձնատիրութիւններէն մէկն է: Կարճըր թեկնածու նկատեց նաեւ Ալեաթ Ալաուիին եւ Ապտէլպազի չաքիւրը: Կը նախատեսուի նաեւ, որ խորհուրդին մաս կազմէ այլ սիննի մը եւ քրիստոնէական մը: Կարճըր ակնարկեց, որ քաղաքական գործընթացը հովանաւորելու պարտականութիւնը պիտի յանձնէ ամերիկացի դիւանագէտ ձեռնարկ Պրեմըրի, որ յառաջիկայ շաբաթ Իրաք պիտի հասնի: Կարճըր չըսաւ սակայն, թէ փոխանցման հանգրուանի կառավարութիւնը երբ պիտի կազմուի, կամ թէ ամերիկեան ուժերը մինչեւ երբ Իրաքը գրաւած պիտի պահեն:

Կարճըր խօսեցաւ նաեւ վերաշինութեան աշխատանքներուն եւ հանրային սպասարկութեան վերահաստատման մասին: Ան խոստացաւ, որ Մայիսը պիտի դառնայ «բանալի ամիս» մը կարգն ու կանոնը վերահաստատելու եւ կենսական նկատուող ծառայութիւնները մատուցելու ժողովուրդին:

Հիւսիսային շրջանի քաղաքներէն՝ Մուսուլի մէջ, ամերիկեան հովանաւորութեամբ ընտրուեցան քաղաքապետ մը եւ քաղաքապետական խորհուրդ: Մասուտը պէտք էր կու հարիւր բնակիչներ մասնակցեցան ժողովին, որուն աւարտին տեղի ունեցաւ ընտրութիւնը: Ընտրութեան արդիւնքը եղաւ արաբ քաղաքապետ մը, քիրտ փոխ քաղաքապետ մը, երկու օգնականներ. մէկը՝ ասորի, միւսը՝ թուրքմէն: 24 անդամներէ կազմուած քաղաքապետական խորհուրդին մաս կազմեցին նաեւ ներկայացուցիչներ, եգիպտի եւ շապաբ համայնքներէն: Նորընտիր քաղաքապետը՝ Պանէմ Պոսո խոստացաւ գործակցիլ Մուսուլի մէջ գտնուող ամերիկեան ուժերուն հետ:

Միւս կողմէ, բրիտանացի դիւանագէտներ երէկ վերադարձան Պաղատի բրիտանական դեսպանատունը: 1991ի Ծոցի պատերազմէն ի վեր, բրիտանական դեսպանատունը փակ կը

մնար: Բրիտանացի դիւանագէտը՝ Քրիսթֆըր Սեկըր ըսաւ, որ «դեսպան» եւ «դեսպանատուն» բառերը պիտի չգործածուին, որովհետեւ Իրաքի մէջ տակաւին կառավարութիւն չկայ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ Կարմիր Խաչ կազմակերպութիւնը յայտնեց, որ Իրանի մէջ 1980-88ի պատերազմէն ի վեր բանտարկուած 59 իրաքցիներ պատ արձակուեցան ու երէկ Իրաք վերադարձան: Իրան կ'ըսէ, որ ասիկա բանտարկեալներու վերջին խմբակն է եւ թէ Իրաքի այլ բանտարկեալներ չկան:

(Ա.Յ.Փ)

ԹԵՂՐԱՆ ԿԸ ՀՎԱԿԱԶԳԵ ՓԱՌԵԼԻ ԾԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԹԵՂՐԱՆ, 5 (ԱՅՓ).- Իրանը մեկուսացնելու ամերիկեան սպառնալիքը մը գաղջ հակադարձութեան մը արժանացաւ Երկուշաբթի օր Թեհրանի մէջ: Մրտաքին գործոց նախարարութեան բանբեր Համիտ Ռեզա Ասեֆի ըսաւ, որ Իրանը մեկուսացնելու, ինչպէս նաեւ իրանցիներուն ու անոնց ղեկավարին միջեւ հարցեր տեղեկելու ամերիկեան ծրագիրը ճախող է:

Ասեֆի կը հակադարձէր Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլիի Կիրակի օր կատարած մէկ յայտարարութեան: Փաուլի ըսած էր, որ Ուաշինկթընի քաղաքականութիւնն է մեկուսացնել Իրանը՝ միեւնոյն ատեն սակայն կապի մէջ մնալով Ուաշինկթընի հետ:

Ասեֆի ըսաւ, որ այսպիսի յայտարարութիւններ եւ սպառնալիքներ նորութիւն չեն: Ան ակնարկեց, որ Ուաշինկթըն չի կրնար մեկուսացնել Իսլամական Հանրապետութիւնը, որ շատ լաւ կապեր ունի շրջանային եւ այլ երկիրներու հետ:

ՓՈՒՆԿԵԱՆԿ ԿԸ ՄՊԱՌՆԱՅ ԱՌԿԱՍԵԼ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԶԵՆՔԵՐՈՒ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՍԵՆՈՒԼ, 5 (ԱՅՓ).- Հիւսիսային Բորէա կը սպառնայ առկախել կորիւսային վէճերու գծով բոլոր բանակցութիւնները, եթէ Միացեալ Նահանգներ դրական պատասխան չտան Փիոնկեանցիի առաջարկին: Փիոնկեանցի կ'առաջարկէ փճացնել կորիւսային վէճերու իր ծրագրը, պայմանաւ որ Ուաշինկթըն հատուցում կատարէ քաղաքական եւ տնտեսական վարձատրութիւններով:

Հիւսիսային Բորէա դիտել տուաւ նաեւ, որ Ուաշինկթըն ակնարկ կը դարձնէ կորիւսային տագնապի լուծումը՝ ահաբեկչութիւն հովանաւորող երկիրներու անուանացանկին վրայ դնելով Փիոնկեանցիին:

ՊԵՐՆՁ «ԼՈՒՐՁ» ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ՈՒՆԵՑԱԲ ...

Շարունակուած Ա. ԷջԵԸ

մատական շարժումներու դէմ, իսկ իւրայայտուողներն ալ պետք է որդեգրեն միջոցառումներ մեղմացնելու համար պաղեստինցի ժողովուրդին ծանր վիճակը, ինչպէս նաեւ՝ պետք է վերջ տան բնակեցման քաղաքականութեան, շեշտեց Պերնզ:

Միւս կողմէ, Ապպա Կիրակի օր պատրաստակամութիւն յայտնած էր հանդիպում ունենալ Շարոնի հետ, ինչպէս նաեւ հաւաքելու բոլոր վէճերը, որոնք ապահովութեան ուժերուն ձեռքը չեն: Հակառակ այս պատրաստակամութեան սակայն, Իսրայէլ կը շարունակէ իր հակակշիռին տակ պահել Կապալի եւ Այսրլորդանանի ապահովութիւնը՝ ներխուժումներով, ձեռնարկութիւններով, բնակարաններու քանդումով եւ այլ միջոցառումներով:

Իսրայէլի պետական ռատիոկայանը երէկ հաղորդեց, որ պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆաթ յառաջիկայ շաբթուան մէջ տեսակցութիւն պիտի ունենայ Ապպաի եւ ապահովութեան հարցերու նախարար Մոհամէտ Տահլաւիի հետ: Ռատիոկայանը մանրամասնութիւններ չփոխանցեց հանդիպումին եւ անոր ընթացքին արժարժուելիք հարցերուն մասին: Կ'ենթադրուի սակայն, որ Մոֆաթ Տահլաւին եւ Ապպաի պիտի պահանջէ անմիջապէս ձեռնարկել արշաւի մը արմատական-ծայրայեղական շարժումներուն դէմ:

ՄԻՑՆԱ ԿԸ ԸՐԱՍՐԻ

Իսրայէլի ընդդիմադիր Աշխատաւորական Կուսակցութիւնը տագնապահար վիճակի մը մէջ կը գտնուէր երէկ՝ անոր ղեկավարին՝ Ամրամ Միցնայի նախնակով ու արագ հրաժարականին լոյսին տակ: Միցնայի հրաժարականով մեկնաբաններ վտանգուած կը նկատեն Իսրայէլի քաղաքական առաջին կուսակցութեան գոյատեւումը: Անոնք կ'ըսեն, որ Վորաւոր թեկնածուի մը բացակայութիւնը կ'ամրապնդէ իրենց նախատեսութիւնը:

Մեկնաբաններ դիտել կու տան նաեւ, որ Միցնա հաւանաբար յարմար անձը չէր ստանձնելու ղեկավարութիւնը այսպիսի կուսակցութեան մը: Ըստ մեկնաբաններու, Միցնա կարծի քաղաքագէտ մը չէր, ան ուղղամիտ ու պարկեշտ անձ մըն էր: Միցնա բարկացուցած էր կուսակցութեան մէկ թեւը, երբ մերժեց միանալ Շարոնի կառավարութեան պատճառ դառնալով որ վերապետը կազմէ աջակողմեան կառավարութիւնը:

ԹԵԼ ԱԻԻԻԻ մէկ ատենը ցկեանն բանտարկութեան դատաւարտեց Յաթիի Այսրլորդանանի ղեկավար Մարուան Պարդուիի օգնականներէն մէկը՝ Նասէր Աուիսը, որ ամբաստանուած էր «Աքսայի Նահատակներու Փաղանգներ»-ուն հրամանատարներէն մէկը ըլլալու յանցանքով: (Ա.Յ.Փ)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ


● ԱՐԿԱՐՈՒԹԵԱՆ նախարար Պահիժ Թապաբա երէկ շեշտեց, որ կառավարութիւնը կը հսկէ դատական իշխանութեանց անբարեկամութեան եւ անոր անկախութեան բարեկարգման՝ իբրեւ պաշտպան իրաւունքներու եւ պատրաստութեան:

Թապաբա ըսաւ, որ դատական իշխանութեան անբարեկամութիւնը կը պարտադրէ պատասխանատուութեան խոր վզացում:

● ՊԵՏՊԵՆՈՒԹԵԱՆ նախարար Մահմուտ Համմուտ երէկ ընդունեց Լիբանանի մէջ Յրանսայի ղեկավար Յիլիփ Լը Քուրթիին, որուն հետ քննարկեց Լիբանան-Յրանս երկկողմանի յարաբերութիւնները:

Համմուտ ընդունեց նաեւ լիբանանեան արտաքին գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի խուրիին, որուն հետ քննարկեց լիբանանեան արտաքին գերագոյն խորհուրդի անդամներու անդամակցութիւնը:

● ՈՒՍՏԻՆԿԹԵԱՆ ԵՐԿԱՅԱԳՈՒՅ ԻՐԱՔԵԱՆ ՂԵՎԱԿԱՐ ԽՈՐՀՈՐԴ ՄԸ ՅԱՌԱՋԱՑՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ՄԸ



Երկուշաբթի, 5 Մայիսին լիբանանեան օրաթերթերը իրենց ուշադրութիւնը կենտրոնացուցանեցին Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլիի այցելութենէն ետք շրջանին մէջ տեղեկութեան վիճակին, վարչապետ Ռաֆիք Հարիրիի Քուէթը այցելութեան շուրջ քուէթեան շրջանակներուն մէջ գոյութիւն ունեցող դժգոհութիւններուն, լիբանանեան ներքին քաղաքական իրադարձութիւններուն, ինչպէս նաեւ Իրաքի եւ Պաղեստինի կացութիւններուն վրայ:

Սուաքին հերթին լիբանանեան ներքին քաղաքական իրադարձութիւններուն մասին: «Անուար» օրաթերթը հարց կու տայ, թէ արդեօք Հարիրիի կառավարութիւնը պիտի գծէ «խաղաղութեան ճամբու քարտէս» մը կառավարութեան աշխատանքային ծրագիրը փոփոխութեան ենթարկելու համար: «Իրերայացող իրադարձութիւններու խճողումին մէջ, իշխանութեան պետերը կը թուին շուրջ ըլլալ՝ առաջնահերթութիւնները դասաւորման ենթարկելու իմաստով», գրած էր «Անուար»: Թերթը նաեւ յայտնած էր, թէ վարչապետ Հարիրիի Քուէթը այցելութեան դէմ արշաւ մը սկսած է:

Վարչապետ Հարիրիի Քուէթը այցելութեան հարցով «Մուսաբապալ» գրած էր, թէ Քուէթի կառավարութիւնը կ'ողջունէ այցելութիւնը, իսկ միւս կողմէ քուէթցի երկու երեսփոխաններ բուն կերպով կը քննադատեն Հարիրիին:

«Տիար» կը հաղորդէ «Մաքտուալուպ» ճաշարանի պայթեցման հարցին բացայայտման լուրը՝ նշելով, որ ասիկա կարելի իրագործում մըն էր Լիբանանի հետախույզական ծառայութիւններուն համար:

Շրջանային իրադարձութիւններու լոյսին տակ «Նահար» կը յայտնէ, թէ Դամասկոս պահանջած է ճնշում բանեցնել Իսրայէլի վրայ, իսկ յորդանանեան լուրերը շրջան կ'ընեն եռակողմ գերատիժանի մը մասին: «Նահար» կ'աւելցնէ, որ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլի Սուրիան պուշուցուցած է ամերիկեան պահանջները չգործադրելու հետեւանքներէն:

● «Մաֆիթ» օրաթերթին համաձայն, հակառակ ամերիկեան պահանջանքներուն, Պէյրութ եւ Դամասկոս ամերիկեան կեցուածքին մէջ կը տեսնեն «Երկխոսութեան մթնոլորտ» մը: Այս առնչութեամբ Փաուլի յայտարարած է. «Գործ կ'ուզենք, եւ ո'չ՝ խօսք. պիտի հսկենք Սուրիոյ վրայ»: Միւս կողմէ, «Մուսաբապալ»-ի համաձայն, Քոլին Փաուլի յայտարարած է, թէ Սուրիոյ նախագահ Պաշա Սաադ պատրաստակամութիւն յայտնած է Միացեալ Նահանգներու հետ կապերը բարելաւելու առնչութեամբ, սակայն, հարցերը կախուած են անոր կատարելիք գործէն եւ արտասանելիք խօսքէն:

● «Պայրաք» օրաթերթը կը գրէ, թէ նախագահ Վոր. Էմիլ Լահուտ Քոլին Փաուլիի ըսած է, որ Լիբանան խաղաղութեան կողմնակից է, սակայն Իսրայէլ վիճեցուցած է Փաուլիի նախաձեռնութիւնը՝ պատեհած շղթայներով պաղեստինցիներուն դէմ: «Պայրաք» ակնարկած է, որ Ք. Փաուլի Սուրիոյ խոստացած է արդիւնաւէտ իրագործումներ, եթէ վերջինս Միջին Արեւելքի մէջ կիրարկէ չափաւորական քաղաքականութիւն: «Քիֆիս Արապի» օրաթերթը կը կարգին կը նշէ, որ պաղեստինցի անջատողականներ սուտ կ'որակեն Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլիի յայտարարութիւնները եւ կը հերքեն Դամասկոսի մէջ պաղեստինեան կազմակերպութիւններու գրասենեակներուն փակման մասին լուրերը: Քոլին Փաուլի շրջանին տալիք երկրորդ պաշտօնական այցելութիւնը կը սկսի Շաբաթ օր, իսկ Իսրայէլ կ'առկախէ բնակեցման վայրերը քանդելու քայլը:

● «Պէյրութ» կը խօսի «Փաուլիի ցանկին մասին» խորագրի տակ, «Նահար» օրաթերթը գրած էր, որ ամերիկեան եւ եւրոպական շրջանակներ Լիբանանի կը պահանջեն գործակցիլ Ապու Մազէնի պաղեստինեան կառավարութեան հետ:

Անդրադառնալով պաղեստինեան իրադարձութիւններուն «Անուար» յայտնած էր, որ Նապուսի եւ Խան Եունէի մէջ տեղի ունեցած բախումներու ընթացքին 1 պաղեստինցի նահատակուած է, իսկ 10 ուրիշներ վիրաւորուած են:

● «Տիար» կը նշէ, թէ 2 Նորեքշաբթի Մահմուտ Ապպա (Ապու Մազէն) պիտի տեսակցի Շարոնի հետ՝ քննարկելու համար «երկկողմանի պարտաւորութիւնները»:

Գրաւեալ Պաղեստինի եւ բնագրաւեալ Իսրայէլի ներքին քաղաքական պարագայներուն անդրադառնալու ծիրին մէջ, «Մաֆիթ» օրաթերթը կ'անդրադառնայ Իսրայէլի Աշխատաւորական Կուսակցութեան ղեկավար Ամրամ Միցնայի իր ղեկավարի պաշտօնէն հրաժարումին եւ կուսակցութեան մէջ ներքին պայքարի ծայր տալուն իրողութեան: Թերթը կ'աւելցնէ, որ խաղաղութեան ճամբու քարտէսը գործի դնելու համար Ուաշինկթընի եւ Թէլ Աւիւ վայրագութեանց կապեցումը նախապայման կը նկատեն:

Իրաքեան իրադարձութիւններուն մասին խօսելով «Նահար» կը հաղորդէ, որ ամերիկեան վարչապետեան տակաւին վերջնականապէս չէ որոշած Իրաքի կառավարման համար դիւանագէտ Փոլ Պրայմըրի նշանակման հարցը, իսկ միւս կողմէ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտ իր վստահութիւնը յայտնած է այն հարցին կապակցութեամբ, թէ կարելի պիտի ըլլայ Սատտամը գտնել, եթէ ան ողջ է տակաւին:

● «Անուար» անդրադարձած է Իրաքի մէջ յաւելեալ հաւաքական գերեզմաններու յայտնաբերման մասին: «Մաֆիթ»-ի համաձայն, Ուաշինկթըն կը հսկէ Իրաքի քարտէսի վրայ եւ չ'ուզէր Իրանի հետ կառուցելու կարելի:

Եւ վերջապէս, «Պայրաք» օրաթերթը կը նշէ, որ Յովհաննէս Պոդոս Բ. պապը երակացուցած է Ապպաի կատարած իր 31 ժամուան պաշտօնական այցելութիւնը: Հարիւր հազարաւոր հաւատացեալներ պապը ողջունած են Մատրիտի մէջ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ԱԼԺԵ.- Երկու հոգի սպանուեցաւ եւ երեք ուրիշներ վիրաւորուեցան Ալճերիոյ Միտիա շրջանին մէջ, որ իսլամական ըմբոստ ուժեր ենթադրաբար յարձակում գործած էին, յայտնեցին ապահովութեան մարզի պաշտօնատարները:

● ԳԱՀԻԲԵ.- Գահիրէի արուարձաններէն մէկուն մէջ սուրացող օթոպիւս մը բախելով երկու միւսիպատեւրու, պատճառ դարձած էր երեք հոգիի սպանութեան: 14 հոգի ալ վիրաւորուած է:

● ՆԱՍՊԱՏԻ.- Պանկլատէշը հարուածող արեւելքային փոթորիկներ ակնի քան 31 րոպէս Կարիւր վիրաւորներ խլած է, յայտնեցին պաշտօնատարները: Փոթորիկը հողային սահանքներ ու ողողումներ պատճառած է:

● ԲԵՆՍԵՍ ՍԻԹԻ.- Ամերիկեան չորս նահանգներ հարուածող փոթորիկ մը 21 րոպէս Կարիւր վիրաւորներ խլած է: Փոթորիկին թիրախ դարձած են Միտիա, Բէնսաբ, Թէնըսի եւ Արքաիսսա նահանգները, որ նաեւ նիւթական ծանր վնասներ արձանագրուած են:

● ՎԼԱՏԻՆՈՒՄԻՆԻ.- Ռուսիոյ ծայրագոյն արեւելքը հրոյ ճարակ դարձած է ակնի քան 300 հազար հեքթար անտառածով շրջան մը: Ակնի քան 4 հազար հրէջները օդանւերով եւ ուղղաթիւներով կը փորձեն մարել կրակը:

ՊՍՊԵՍԻՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏԱՆ ԳԾՈՎ

ՅՈՐԴԱՆԱՆ ԾԻԾԱՂԵԼԻ ԿԸ ՆԿԱՏԵ ԻՍՐԱՅԵԼԻ ԽՈՒՓԱՆՄԱՆ ԵՐԿԵՐԸ

ԱՄՄԱՆ, 5 (ԱՅՓ).- Յորդանանի արտաքին հարցերու պետական նախարար Ժիւադէլի կը նկատէ Իսրայէլի պօսաշրջութեան նախարարին ճիգերը, որոնց նպատակն է արգիլել պաղեստինեան պետութեան մը հաստատումը Յորդանան գետին արեւմտեան ափին վրայ:

Շահէր Պաք ըսաւ, որ Պէնի Էլ-Նի ծրագիրը ծիծաղելի է եւ թէ անկախ չ'արտացոլար Իսրայէլի կառավարութեան կեցուածքը: Էլոն Կիրակի օր Միացեալ Նահանգներ ժամանած էր հանդիպումներ ունենալու բարձրաստիճան պաշտօնատարներու հետ եւ պահանջ համոզելու, որ Վորաւոր չկանգնին պաղեստինեան պետութեան, ինչպէս նաեւ խաղաղութեան ճամբու քարտէսին, որուն գործադրութեամբ՝ 2005ին պիտի յայտարարուի պաղեստինեան անկախ պետութիւնը: